

	Վարչության 2026թ. սեպտեմբերի 10-ի թիվ 01/062-349 L որոշման	Էջ 1 / 5
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Ուժի մեջ է՝ 23.09.2026թ.-ից

Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել: Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակված գործող պայմաններից տարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա տարբերակով: Ամբողջական պայմանները՝ [հեղրկյալ հղմամբ](#):

Ռեզիդենտ իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդների բանկային հաշիվների բացման և սպասարկման սակագներ և պայմաններ			
1. Բանկային հաշվի վարում՝			
1.1. Բանկային հաշվի բացման միջնորդավճար՝	1.1.1. Ռեզիդենտ իրավաբանական անձ և ԱՁ, որը գրանցվել է ՀՀ-ում և ունի ՀՎՀՀ և որի տնօրենը, հիմնադիրը և իրական շահառուն ՀՀ քաղաքացի է,	0 ՀՀ դրամ	
	1.1.2. Անհատ ձեռնարկատերերի դեպքում, եթե ԱՁ-ի քաղաքացիությունը ՀՀ չէ, սակայն գրանցվել է ՀՀ-ում և ունի ՀՎՀՀ ²	70.000 ՀՀ դրամ	
	1.1.3. Իրավաբանական անձանց դեպքում, որի տնօրենը, մասնակիցը/բաժնետերը կամ իրական շահառուն ՀՀ քաղաքացի չէ, սակայն գրանցվել է ՀՀ-ում և ունի ՀՎՀՀ ²	100.000 ՀՀ դրամ	
1.2. Բանկային հաշվի տարեկան սպասարկման միջնորդավճար ³ (բացառությամբ վարկային հաշիվների)		5.000 ՀՀ դրամ	
1.2.1. Բանկի հաշվետեր իրավաբանական անձ Հաճախորդի մասնակցի/բաժնետիրոջ կամ իրական շահառուի, տնօրենի փոփոխության դեպքում, եթե նոր մասնակիցը/բաժնետերը կամ իրական շահառուն, տնօրենը չի հանդիսանում ՀՀ քաղաքացի, փոփոխության միանվագ միջնորդավճար ⁴		100.000 ՀՀ դրամ	
1.3. Հաճախորդի բանկային հաշվի փակման միջնորդավճար՝	1.3.1. Հաճախորդի դիմումի համաձայն՝	0 ՀՀ դրամ	
	1.3.2. Առանց Հաճախորդի դիմումի ⁵	2,500 ՀՀ դրամ	
1.4. Կանխիկ դրամական միջոցների մուտքագրում բանկի դրամարկղից	1.4.1. Մինչև 200,000 ՀՀ դրամ (ներառյալ) ⁶	0.5%, min 500 ՀՀ դրամ	
	1.4.2. 200,000 ՀՀ դրամից ավել	0 ՀՀ դրամ	
1.5. Բանկային հաշվի (ներառյալ ավանդային և վարկային հաշիվների) շարժի և մնացորդի վերաբերյալ SMS ծանուցում (յուրաքանչյուր հաղորդագրության համար)		30 ՀՀ դրամ ⁷	
1.6. Ստանդարտ ձևաչափի չեկային գրքույկի տրամադրում		0 ՀՀ դրամ ⁷	
1.7. Այլ ծառայություններ հաճախորդի ցանկությամբ		պայմանագրային	
2. Բանկային հաշվի մնացորդ	2.1. Բանկային հաշվի նվազագույն մնացորդ	Չի պահանջվում	
	2.2. Հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքի չափ	ՀՀ դրամ	Արտարժույթ
		0%	0%

	Վարչության 2026թ. սեպտեմբերի 10-ի թիվ 01/062-349 L որոշման	Էջ 2 / 5
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Ուժի մեջ է՝ 23.09.2026թ.-ից

3. Տեղեկատվական ծառայություններ	3.1. Մինչև 1 ամիս ժամանակահատվածի համար բանկային հաշվի քաղվածքի (ներառյալ ավանդային և վարկային հաշիվների) տրամադրում ⁸	0 ՀՀ դրամ ⁷
3.2. Հաճախորդի	3.2.1. 2-12 ամիս ներառյալ	2,000 ՀՀ դրամ ⁷ + փոստային ծախսեր

պահանջով բանկային հաշվի քաղվածքի տրամադրում ըստ ժամանակահատվածի՝ (ներառյալ ավանդային և վարկային հաշիվների)	ժամանակահատվածի համար (յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր փաստաթղթի համար) ⁸	(առկայության դեպքում)
	3.2.2. 12 ամսից ավել ժամանակահատվածի համար (յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր փաստաթղթի համար) ⁸	3,000 ՀՀ դրամ ⁷ + փոստային ծախսեր (առկայության դեպքում)
3.3. Տեղեկանքների տրամադրում	3.3.1. Ստանդարտ բնույթի տեղեկանքների տրամադրում հայերեն/անգլերեն Լեզուներով ^{8, 9}	2,000 ՀՀ դրամ ^{7, 10} + փոստային ծախսեր (առկայության դեպքում)
	3.3.2. Ոչ ստանդարտ բնույթի տեղեկանքների և համանման վճարային փաստաթղթերի տրամադրում հայերեն/անգլերեն լեզուներով (համաձայն հաճախորդի գրավոր դիմումի) ^{8, 11}	5,000 ՀՀ դրամ ⁷ + փոստային ծախսեր (առկայության դեպքում)
3.4. Աուդիտորական հարցման պատասխանների պատրաստում և տրամադրում կազմակերպություններին		10,000 ՀՀ դրամ ⁷ + փոստային ծախսեր (առկայության դեպքում)

¹ Հեռավար նույնականացման դեպքում՝ առանց Բանկ ներկայանալու, ՓՄՁ հաճախորդից գանձվում է 50,000 ՀՀ դրամ լրացուցիչ վճար՝ անկախ բացվող հաշիվների քանակից:		
² Նշված դեպքերում հաշվի բացման դեպքում ՀՀ դրամով հաշիվը պարտադիր է, ընդ որում, եթե Հաճախորդը միաժամանակ բացում է տարբեր արտարժույթային հաշիվ(ներ), ապա հաշվի բացման վճար նախատեսված լինելու դեպքում վճարը գանձվում է միայն 1 հաշվի համար՝ առաջին անգամ հաշիվ բացելիս: Սակագինը կիրառելի է 01/03/2022թ.-ից հետո պետական գրանցում ունեցող և Բանկում հաշիվ բացող կազմակերպությունների և Անհատ ձեռնարկատերերի համար:		
³ Մեկից ավել դրամային կամ մեկից ավել արտարժույթային հաշիվ ունենալու դեպքում սպասարկման վճարը գանձվում է միայն մեկ դրամային և միայն մեկ արտարժույթային հաշվի համար: Հաշվի սպասարկման վճարը գանձվում է միանվագ, յուրաքանչյուր 12 ամսվա համար:		
⁴ 1.2.1 Սակագինը կիրառելի է 01/03/2022թ.-ից հետո պետական գրանցում ունեցող և Բանկում հաշիվ բացած Իրավաբանական անձանց համար:		

	Վարչության 2026թ. սեպտեմբերի 10-ի թիվ 01/062-349 L որոշման	Էջ 3 / 5
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Ուժի մեջ է՝ 23.09.2026թ.-ից

⁵ Հաճախորդի բոլոր հաշիվներով 12 ամիս անընդմեջ գործարք չիրականացնելու դեպքում հաշիվը դառնում է չաշխատող հաշիվ և Բանկը գանձում է միջնորդավճար 2,500 ՀՀ դրամի չափով և փակում է Հաճախորդի հաշիվները, եթե դրանց մնացորդները գրոյական են: Ընդ որում, այն պահից, երբ հաշիվը դառնում է չաշխատող հաշիվ, ապա 1.2 կետում նշված Հաշվի սպասարկման վճարը այլևս չի գանձվում: Հաշվի սպասարկման վարձի հաշվարկը վերականգնվում է, եթե հաճախորդի հաշիվներից հանվում է մեկ տարի շարժ չունեցող արգելանքը և հաշիվը դառնում է ակտիվ հաշիվ: ⁵ Ընդ որում, նշված միջնորդավճարը գանձելու համար Հաճախորդի հաշիվներին բավարար միջոցներ չլինելու դեպքում Բանկը գանձում է միջնորդավճար հաշիվներին առկա մնացորդի չափով: ⁵ Եթե հաշիվներին առկա մնացորդը 2,500 ՀՀ դրամից ավել է, ապա գանձվում է 2,500 ՀՀ դրամ, իսկ 13-րդ ամսից սկսած հաջորդող չաշխատող ժամանակահատվածի համար՝ ամսական 1,000 ՀՀ դրամ: Սույն կետում նկարագրված դրույթները կիրառելի չեն Փրայվիթ բանկինգի շրջանակներում մատուցվող ծառայություններից օգտվող հաճախորդների համար:
⁶ Սույն սակագինը կիրառելի չէ և/կամ սահմանվում է 0 ՀՀ դրամ Բանկին պատկանող ինքնասպասարկման սարքերի խափանման կամ այդ սարքերից հաշվի համալրման ծառայության անհասանելիության դեպքում և այդ ընթացքում, խմբային մուտքերի դեպքում, որոնց համար ներկայացվում է համապատասխան էլեկտրոնային ֆայլ, կառուցապատողի հատուկ հաշիվներին մուտքերի դեպքում, ինչպես նաև ինքնասպասարկման սարքերով չհամալրված Բանկի մասնաճյուղերի (ՍՍՎ) դեպքում:
⁷ Սակագները ներառում են ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ):
⁸ Փրայվիթ բանկինգի շրջանակներում մատուցվող ծառայություններից օգտվող Հաճախորդների համար սակագինը սահմանվում է 0 ՀՀ դրամ:
⁹ Բանկի ստանդարտ բնույթի տեղեկանքներ են համարվում բանկային հաշիվների առկայության, մնացորդի, հաշիվներ չունենալու, ավանդային հաշիվների, վարկային պարտավորությունների, պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքներ:
¹⁰ Միայն հաշիվներ չունենալու/հաշիվների փակման վերաբերյալ տեղեկանքների տրամադրման դեպքում սակագինը սահմանվում է 0 ՀՀ դրամ:
¹¹ Բանկի ոչ ստանդարտ բնույթի տեղեկանքներ են համարվում ստանդարտ բնույթի տեղեկանքներից տարբերվող տեղեկանքները:

ՓՄՁ Իրավաբանական անձ և Անհատ Ձեռնարկատեր հաճախորդների հետ կնքված պայմանագրերի պատճենների տրամադրման սակագների և պայմանների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

- Երաշխավորված ավանդի առավելագույն սահմանաչափերը և հաշվարկման կարգը.
- Եթե ավանդատուն ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 16,000,000 հայկական դրամ է:
 - Եթե ավանդատուն ունի միայն արտարժույթային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 7,000,000 հայկական դրամ է:
 - Եթե ավանդատուն ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը 7,000,000 հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 16,000,000 հայկական դրամով:
 - Եթե ավանդատուն ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է 7,000,000 հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային

	Վարչության 2026թ. սեպտեմբերի 10-ի թիվ 01/062-349 L որոշման	Էջ 4 / 5
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Ուժի մեջ է՝ 23.09.2026թ.-ից

բանկային ավանդը՝ 7,000,000 հայկական դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի Արդշինբանկ ԲԲԸ-ում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի՝ բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ բանկային ավանդի պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե բանկային ավանդի պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ: Երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարները հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժույթային ավանդները:

Հաշիվը փակելիս ստուգվում է հաշվի փակման խոչընդոտ հանդիսացող որևէ հիմքի առկայությունը:

Բանկային հաշիվը ենթակա չէ փակման, եթե

1. Հաճախորդը Բանկի նկատմամբ ունի պարտավորություններ:
 2. Հաճախորդն ունի գործող ժամկետային ավանդի պայմանագիր և այդ հաշվով կատարվում է Հաճախորդի գործող ժամկետային ավանդային պայմանագրով ավանդի ներդրման, ավանդի տոկոսագումարների վճարան և ավանդային հաշվով այլ գործարքներ, 3. Հաճախորդը ունի գործող վարկ կամ վարկային գիծ և այդ հաշվով կատարվում է Հաճախորդի գործող վարկային պայմանագրով նախատեսված վարկի գումարի և տոկոսագումարի մարում:
 4. Մնացորդ պարունակող հաշվի վրա առկա է արգելանք՝ ՀԿԱԾ, ԱՀ ԴԱՀԿ-ի, դատարանի և հարկային մարմինների որոշումներով, ինչպես նաև, եթե առկա է քրեական հետապնդում իրականացնող մարմինների որոշումներ:
- Հաշիվներին արգելանքի բացակայության դեպքում Բանկի նկատմամբ հաշիվների գծով ունեցած պարտավորությունների չափով գումարները անակցեպտ կարգով դուրս են գրվում Հաճախորդի հաշիվներից և Հաճախորդին տեղեկացվում է հաշվի մնացորդների ստացման եղանակների մասին՝
- Կանխիկ՝ մասնաճյուղի տարածքում. սակագները ներկայացված են այստեղ: ▪
- Փոխանցման հանձնարարականի ներկայացում այլ բանկ փոխանցման նպատակով. սակագները ներկայացված են այստեղ:▪
- Բանկային հաշիվը փակվում է դիմումը Բանկ մուտքագրելուց հետո առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ փակված (նաև ինքնաշխատ եղանակով փակված) հաշիվները ենթակա չեն վերաբացման:
- Հաճախորդի Բանկային հաշիվը կարող է փակվել Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման օրենքով սահմանված դեպքերում՝ առանց Հաճախորդի դիմումի:

Հանձնարարականների տրամադրման և կատարման ժամկետները սահմանվում են համաձայն [փոխանցումների սակագների ու պայմանների](#):

Իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդների հաշիվներից կանխիկացման սակագները ներկայացված են [այստեղ](#):

	Վարչության 2026թ. սեպտեմբերի 10-ի թիվ 01/062-349 L որոշման	Էջ 5 / 5
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Ուժի մեջ է՝ 23.09.2026թ.-ից

■ Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

■ Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա և այդ մասին հաշվետիրոջը տեղեկացնելու կարգը:

■ Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ծանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):

■ Օտարերկյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

■ Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Արդշինբանկ» ԲԲԸ հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

■ Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, գործարքների կնքման նպատակով պատվերների ներկայացման և կատարման ընթացակարգը, ինչպես նաև պայմանագրի դադարեցման կարգն ու այլ համապատասխան դրույթները, ներկայացված են [Բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանների](#) 4-րդ գլխում: